

ամէնօրեայ գործունէութիւնն ունենալ, հաստատել վճարեալ ձեռնհաս պաշտօնատարներու գրութիւնը, ուսումնասիրելու և նախապատրաստելու համար օրուան ամէն խընդիր, որպէսզի ըստ այնմ՝ անոնց բերած եզրակացութիւններուն վրայ՝ գործադիր իշխանութեան պետն իր անձնական նախաձեռնութեամբ ի հարկին կատարէ պէտք եղած անմիջական տնօրինութիւններ, միշտ ենթարկելով զանոնք պատկանեալ մարմինն վաւերացման:

Ի. Ազգ. Վարչութեանց մօտ անուանում՝ իրաւագէտ խորհրդականներու:

ԻԱ. Անուանում՝ Կրօնական Կրթական, Ելևմտական և Տնտեսական, ինչպէս նաև Վանօրէից և Կտակաց Տեսուչներու, մնայուն ու թոշակաւոր պաշտօնով:

### Երուսաղէմ

Նոյեմբեր ամսոյ վերջերը միաբանական ընդհանուր ժողով գումարուեր և իր մէջէն ընտրեր է երեք անձ, որոնք տնօրէն ժողովի անդամներուն հետ բացեր են հանգուցեալ Յարութիւն պատրիարքի սենեակները և ցուցակագրեր են նորա իրեղէններն ու գրամները:

Կառկուռի որդիները՝ Փայիկ և Նայիմ Բերութէն հարիւրաւոր օրինակ յայտարարութիւններ ցրուած են Երուսաղէմի հասարակութեան, որով կը ծանուցանեն, թէ Երուսաղէմի պարսպի արևմտեան կողմը գտնուող Մեծ—Արտ անունով յայտնի կալուածը Շէրիի հէօջէթներով և Իլամներով իրենց սեփականութիւնն է, ուստի կզգուշացնեն հասարակութիւնը, որ ոչ տեղ գնէ և ոչ կալուածին վրայ շէնք կառուցանէ. հակառակ պարագային փողը պիտի կորսընցունէ այնպիսին:

Յայտնի է՝ թէ 1886 թուին Յարութիւն Վեհապետեան արքեպիսկոպոսի Պօլսոյ պատրիարքութեան ժամանակ Կառկուռի դատ անունով այդ խնդիրը տաճկահայ

ազգայնոց մեծ յուզման առիթ տուած և շատ զբաղեցուցած է վարչութիւնը: Պատրիարքը այն ժամանակ յաջողած էր Սուլթանի իրադէսով բեկանել տալ Շէրիի դատարանի վճիռը և հաստատել Երուսաղէմի Հայոց վանքի այգկալուածին վրայ ունեցած սեփականութեան իրաւունքը: Բացի այդ նոյն խնդիրը վերստին արժարժուած է հանդուցեալ Տ. Մատթէոս Բ. Վեհ Կաթողիկոսի առաջին պատրիարքութեան օրով և այն ժամանակի Արդարադատութեան նախարարը գրած է նորին Վեհափառութեան՝ թէ նոյն խնդիրը վերջացած գործ է և հակառակորդք իրաւունք չունին բնաւ դատ բանալու:—

Բիւզանդիոնի մէջ (գեկտեմ. 31) կարդում ենք, որ Եաֆայի մէջ Աստուածատուր եպիսկոպոսի կալուածի գրաւման մասին դատական նախարարութիւնը հեռագրել էր Եաֆա, որ գործադրութիւնը յետաձգուի, սակայն Շէրիի պաշտօնեան առարկելով, որ Փեթվահանէից հաստատուած է վճռագիրը, գործադրել է և կալուածի արդիւնքը արգելքի տակ է դրել: Իրան գիւմուսին Շէյխ-Իւր-Իսլամութիւնը պատասխանել է, թէ գործը արդէն վերջացած է: Թէև դատական նախարարութիւնը պատրիարքի առարկութիւնը ճիշդ է համարում, սակայն հազիւ բաւարար արդիւնք տեսնուի:

Կարկուռի ժառանգները քաջալերուելով Եաֆայի կալուածքի այսպիսի ելքից և Էդի-Գուլէի ազարակի գրաւումից՝ նորից դատ են սկսել:

Այս բոլորը գալիս են ապացուցանելու, որ Սահմանագրութեամբ ևս Թուրքիայի այլակրօնների իրաւունքները պաշտպանուած չեն և Երուսաղէմի պատրիարքական տեղապահ Տ. Դանիէլ արքեպիսկոպոսը հեռագրել է Կ. պօլսոյ պատրիարքարանին, թէ ձախորդ հանգամանքում պարտաւորուած պէտք է լինի հրաժարուել:

«Սուբհանգակ»ը № 225, առնելով արտասահմանեան թերթերից գրում է «Սամաթիա բնակեալ Սօֆի մայրապետ, գիմած ըլլալով պատրիարքարան, որպէս զի իր անշարժ կալուածներուն և գոյքերուն պաշտօնական արձանագրութիւնները կատարուին և մնան էջմիածնի վանքին, կտակաց հոգաբարձութեան քարտուղար Նշան էֆ. երկու քահանաներու հետ կը կատարէ այդ արձանագրութիւնը: Կտակուած գոյքերուն արժէքը 2500 ոսկիէն աւելի կը կարծուի»:

**Խ Ո Ր Հ Ր Դ Ա Մ ՈՒ Թ Ի Ի Ն**

«Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւնս ի մարդիկ հաճութիւն»:

(Перк. Вѣст. 1910 г. № 52).

Մեզնից համարեա երկու հազար տարի առաջ, երկնային անտեսանելի բարձունքում փրկութեան ծարաւի մեղսամաճ աշխարհի վերայ լսելի եղան հրեշտակային ուրախարար աւետիքի այս խօսքերը, և այդ օրից սկսած ամեն տարի նրանք հնչում են քրիստոնեայ հաւատացեալ աշխարհի ահանջին:

«Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւնս, ի մարդիկ հաճութիւն»։ Որքան պայծառ և հանդիսաւոր խընդութիւն է լսում այս խօսքերի մէջ, մարդկային մեղքերի իշխանութիւնից ազատելու խնդրութիւն, դէպի նոր կեանքը վերածնութեան ընդհանրութիւն: Հաւատի ու աղօթքի որպիսի ոգևորութիւն է շնչում այս կէս հրեշտակային, կէս մարդկային նուագը, որ աւերում է երկնքի և երկրի միացումն մի աստուածային սիրոյ և հաշտութեան սիղբունքով: Եւ որպիսի սքանչացմամբ են լցնում մինչև այսօր այս հնչիւնները, իսկական հաւատացողներն սրտերը, հաւատացողներն, որոնք տաճար են գալիս աղօթք և փառաբանութիւն վերառաքելու նրան, որ իւր հետ աշխարհ ընդհանր խաղաղութիւն և եղբայրութիւն:

Բայց ո՞ւր են այդ խաղաղութիւնն ու եղբայրութիւնը, որի գալստեամբ արդէն 19 դար է, որ քրիստոնեայ մարդկութիւնը հրճուած է: Ամեն մի քայլափոխում իրական կեանքը չի՞ հերքում արդեօք հրեշտակային աւետիքը: Ուր էլ մտիկ